1000 խոշոր հարկատուների կողմից 2023թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2023թ. հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 381 մլրդ դրամ, ինչը 23,3%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): Դիտարկվող եռամսյակում խոշորագույն հարկատուների կողմից վճարված հարկերի ընդհանուր մեծության աճի տեմպը 2017-2020թթ. համեմատությամբ էականորեն ավելացել է:



Գծապատկեր 1. Հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2023թ. հունվար-մարտ ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, որոշակի փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2023թ.նշված ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 90 մլրդ դրամ հարկ՝ այնքան, որքան նախորդ տարի: Մյուս կողմից, 100 խոշորագույնների վճարած հարկերի մեծությունը գերազանցել է 210 մլրդ դրամը, ինչը 20 մլրդ դրամով ավելի է 2022-ի առաջին եռամսյակի արդյունքից (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հունվար-մարտ ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Ի տարբերություն առավել խոշոր հարկատուների, 1000-յակի ցանկում ներառված վերջին 100 հարկատուների վճարած հարկերը դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի ավելացում են արձանագրել (նախորդ տարվա համեմատ՝ առնվազն 50%-ի չափով): Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2023թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 8 մլրդ դրամ՝ 2022-ի 5,3 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2023թ. առաջին եռամսյակի համար կազմել է 36 անգամ, ինչը որոշակիորեն ցածր է՝ նախորդ տարիների համեմատությամբ: Մյուս կողմից, առաջին և վերջին տասնյակների վճարած հարկերի հարաբերակցությունը զգակիորեն աճել է՝ հասնելով 180 անգամի: (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2023թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 65 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2022-ի առաջին եռամսյակում այդպիսի հարկատուների թիվը 49 էր, 2020-ին՝ 47, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ: Նույն կերպ, 2023-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, 144 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 109 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2023թ. առաջին եռամսյակի արդյունքներով, խոշոր հարկատուների ցանկում ներառված տնտեսվարող սուբյեկտների մոտ ¼-ի պարագայում վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 100 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի ցանկում ներառվել էր 469 այդպիսի հարկատու, իսկ, օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ 585 (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2023թ. հունվար-մարտ ամիսներին պետք էր վճարել ավելի քան 75 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ 2022-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 50 մլն դրամը, իսկ 2020-ին՝ 37 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2023-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 50 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը: Նախորդ տարիների համեմատությամբ այս ցուցանիշի մակարդակը էական փոփոխություններ չի արձանագրել: Ի տարբերություն վերջինի, եկամտային հարկի վճարման ծավալով աչքի ընկած սուբյեկտների թիվը ընթացիկ տարում զգալիորեն ավելացել է: Այսպես, հաշվետու եռամսյակում ՀՀ 160 հարկատու վճարել է 100 մլն դրամը գերազանցող եկամտային հարկ: Նախորդ տարի այդպիսիք 126-ն էին, 2020-ին՝ միայն 107-ը: (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազումը, ինչը 2019-ից ի վեր համեմատաբար կայուն վարքագիծ է դրսևորում: 2023թ. հունվար-մարտին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 26,2%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 29,4% էր (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության միայն 22,5%-ն են ուղղակի հարկերը, ինչը զգալիորեն ցածր է նախորդ մի քանի տարիների մակարդակից:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2023թ. առաջին 3 ամիսների արդյունքներով, 43 հակատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 30 էր, իսկ 2020-ին՝ 33:

2023թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 209 ընկերություններ, 2022-ին հանրապետությունում գործել է 175 այդպիսի կազմակերպություն: Ուշագրավ է, որ 2020-ից հետո ցուցանիշի աճի տեմպի նշանակալի արագացում է նկատվում (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2023թ. հունվար-մարտ ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝

ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2022	2023
Ընդամենը, մլրդ դրամ	1.1	1.4	1.5	1.5	1.9
Շահութահարկ, մլն դրամ	155	171	249	227	197
Եկամտային հարկ, մլն դրամ	182	251	280	279	325
ԱԱՀ, մլն դրամ	516	625	700	783	980
Ակցիզային հարկ, մլն դրամ	320	167	214	165	260

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 1,9 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 1,5 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ մոտ 200 մլն դրամ (2022-ին՝ 227 մլն դրամ), եկամտային հարկը՝ 325 մլն դրամ (2022-ին՝ մոտ 280 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 980 մլն դրամ (2022-ին՝ 780 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 260 մլն դրամ (2022-ին՝ 165 մլն դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2022	2023
Ընդամենը	27.0	35.6	39.0	53.0	80.0
Շահութահարկ	2.7	3.5	4.3	3.5	3
Եկամտային հարկ	8	11.6	11	12	15
ԱԱՀ	14	16	20	28	43
Ակցիզային հհարկ	7	1.8	1	1.5	0.8

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. առաջին եռամսյակի արդյունքներով վճարել է 80 մլն դրամի հարկ (2022-ին՝ 53 մլն դրամ), շահութահարկը՝ 3 մլն դրամ (2022-ին՝ 3,5 մլն դրամ), եկամտային հարկը՝ 15 մլն դրամ (2022-ին՝ 12 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 43 մլն դրամ (2022-ին՝ 28 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 78%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ նվազել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը

վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 79,2%, ինչը նկատելիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից (գծապատկեր 9):



Գծապատկեր 9.Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում ներառված հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2022-2023թթ. առաջին եռամսյակի ընթացքում: Դիտարկված հարկատուների միայն 10%-ի դեպքում է, որ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ առկա է վճարած հարկերի ծավալի նվազում: Ընդ որում, այս ցուցանիշով զգալի է առաջին հերթին Զանգեզուրի ՊՄԿ-ի ցուցանիշի կրճատումը՝ շուրջ 20 մլրդ դրամով, ինչը գլխավորապես պայմանավորված է նախորդ տարվա ընթացքում հարկատուի կողմից պետության պահանջով՝ նախկինում թերակատարված հարկային պարտավորությունների վերահաշվարկով ու կատարմամբ: Նաև, որոշ դերակատարում է ունեցել նախորդ տարվա համեմատությամբ այս տարվա առաջին եռամսյակում պղնձի համաշխարհային շուկայում կոնյունկտուրայի որոշ վատթարացումը:

Եվ 4 հարկատուի վճարած հարկերի նվազումը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 600-800 մլն դրամ, իսկ մյուսներինը գրեթե չի գերազանցել 300 մլն դրամի շեմը:

Առաջին հարյուրյակի 11 հարկատուներ նախորդ տարվա ցանկում ներկայացված չեն եղել ընդհանրապես: Իսկ շուրջ 20 հարկատու նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալն ընդլայնել է ավելի քան 1 մլրդ դրամով: Աճի առաջատարներից կարելի է առանձնացնել հետևյալ ընկերություններին. «Փրիթի Ուէյ» (2022-ի համեմատ հարկային վճարումներն ավելացրել է 8,2 մլրդ դրամով), «Ակբա Բանկ» (ավելացումը՝ 5,4

մլրդ դրամ), «Մոբայլ Սենթր Արթ» (+4 մլրդ դրամ), «Գրանդ Տոբակո» (+3,8 մլրդ դրամ), «Սի Փի Էս Էներջի Գրուպ» (+3,1 մլրդ դրամ):

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2021	2022	Տարբերություն
1	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	20.1	20.9	0.8
2	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	35.4	15.5	-19.9
3	«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	7.9	11.7	3.8
4	«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ»	0.5	8.7	8.2
5	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	5.9	7.3	1.4
6	ԱԿԲԱ ԲԱՆԿ	1.7	7.1	5.4
7	«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	1.3	5.3	4.0
8	«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»	2.0	5.1	3.1
9	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	2.6	4.5	1.9
10	«ՖԼԵՇ»	3.9	3.9	0.0
11	«ՍԻԹԻ»	2.5	3.6	1.1
12	«ՅՈՒՔՈՄ»	2.4	3.4	1.0
13	«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»	2.1	3.1	1.0
14	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	2.9	3.0	0.1
15	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»	2.5	3.0	0.5
16	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	3.5	2.8	-0.7
17	«ՄԱՔՍ ՕԻԼ»	2.7	2.7	0.0
18	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	2.3	2.5	0.2
19	«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»	3.1	2.3	-0.8
20	«ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ»	0.1	2.1	2.0
21	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	1.3	2.1	0.8
22	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	1.6	2.0	0.4
23	«ԱՎՏՈԲԱՅ»	0.2	1.9	1.6
24	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	2.0	1.9	-0.1
25	«ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ»	1.0	1.8	0.8
26	«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ»		1.8	1.8
27	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	0.8	1.8	1.0
28	«ՅՈՒԷՍԷՅ ԱՎՏՈԷՔՍՊՈՐՏ ԲՍԵ»	0.7	1.8	1.0
29	«ՄԵԳԱ ԹՐԵՅԴ»	1.4	1.7	0.3
30	«ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ»		1.7	1.7
31	«ՎԵՈԼԻԱ ՁՈՒՐ»	1.4	1.7	0.3
32	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	1.2	1.6	0.4
33	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	1.4	1.6	0.2
34	«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	1.1	1.5	0.4
35	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	1.4	1.5	0.1
36	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	1.3	1.5	0.2
37	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	1.0	1.5	0.5
38	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	1.1	1.5	0.4
39	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	1.5	1.5	0.0
40	«ԷԴԵԼՎԵՅՍ ԿԱ»		1.5	1.5
41	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	1.3	1.5	0.2
42	«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»	1.0	1.4	0.4
43	ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	0.1	1.4	1.3

44	«ԴԻՋԻԹԵՅՆ»	0.9	1.3	0.4
45	«ԲԱՐՍԻՍ»	1.1	1.3	0.2
46	«ԼԵՔՍ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ»	0.5	1.3	0.8
47	«ԱՆԴԱԿՈ»	0.8	1.3	0.5
48	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	0.9	1.3	0.4
49	«ԿԱԲԱՐԿՈ»	1.1	1.3	0.2
50	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»	0.5	1.2	0.7
51	ԻՆԵԿՈԲԱՆԿ	1.3	1.2	0.0
52	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»	1.0	1.2	0.2
53	«ՄՈՒԼՏԻ ՏԱԲԱԿ»		1.2	1.2
54	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	1.0	1.2	0.2
55	«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	1.0	1.2	0.2
56	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	1.0	1.2	0.2
57	«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»	0.9	1.2	0.3
58	«ԹԵԼ-ՍԵԼ»	0.2	1.1	0.9
59	«ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄԶ»	0.5	1.1	0.6
60	«ԶԵԴ ԳՐՈՒՊ»		1.1	1.1
61	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ»	0.9	1.1	0.2
62	«ԱԳ ԻՄՊԵՔՍ»	0.7	1.1	0.4
63	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»	1.0	1.1	0.1
64	ԷՎՈԿԱԲԱՆԿ	0.4	1.0	0.6
65	«ՊԻԿՍԱՐՏ»	1.0	1.0	0.0
66	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	1.0	1.0	0.0
67	«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ»	1.3	1.0	-0.3
68	«ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ»	0.9	1.0	0.1
69	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	0.9	1.0	0.1
70	«ՖՈՐՎԱՐԴ»	0.2	1.0	0.8
71	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	0.7	1.0	0.3
72	«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ»	0.8	0.9	0.1
73	«ԱՐՄՓԱՈՒԵՐ»	0.3	0.9	0.7
74	«ԴԵՐԺԱՎԱ-Ս»	0.8	0.9	0.1
75	«ՔԱՐՍ ՄՈԹՈՐՍ»		0.9	0.9
76	«ՔԱՌՄԱՌԿ»	0.2	0.9	0.7
77	«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ»	1.1	0.9	-0.2
78	«ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ»	0.7	0.9	0.2
79	«ԱԹԵՆՔ»	0.5	0.9	0.4
80	«ԴԱՏԱՐՏ.ԱՄ»	0.4	0.9	0.5
81	«ԱԴԱՄԻՈՒՄ»	1.5	0.8	-0.7
82	«ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ»	0.6	0.8	0.2
83	«ԱՎԵՐՍ»	1.5	0.8	-0.7
84	«ՆԵՎԻՍ»		0.8	0.8
85	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»	0.7	0.8	0.1
86	ՅՈՒՆԻԲԱՆԿ	0.5	0.8	0.3
87	«ԱՐՄԲՐՈԿ»		0.8	0.8
88	«ԿԵՀ ԱՐՄԵՆԻԱ»		0.8	0.8

89	«ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ»	0.4	0.8	0.4
90	«ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ»	0.8	0.8	0.0
91	«ԶԻԳԶԱԳ»	0.6	0.8	0.2
92	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»		0.8	0.8
93	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	1.1	0.8	-0.3
94	«ԷՅՓԻՓԻ»		0.8	0.8
95	«ԶԵԹԱՐՖԵՅՇԸՆՌԻԹԵՅԼ»	0.5	0.8	0.3
96	«ՍՆԱՌՏ»	0.1	0.8	0.7
97	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ»	0.7	0.7	0.1
98	«ՎԱԳԱ-ՖԱՐՄ»	0.7	0.7	0.0
99	«Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ»	0.2	0.7	0.5
100	«ԱԷՐՈՖԼՈՏ- ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ	0.4	0.7	0.3

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2023թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 381 մլրդ դրամ, ինչը 23,3%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Դիտարկվող եռամսյակում խոշորագույն հարկատուների կողմից վճարված հարկերի ընդհանուր մեծության աճի տեմպը 2017-2020թթ. համեմատությամբ էականորեն ավելացել է:,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 90 մլրդ դրամ հարկ՝ այնքան, որքան նախորդ տարի,
- ✓ 100 խոշորագույնների վճարած հարկերի մեծությունը գերազանցել է 210 մլրդ դրամը, ինչը 20 մլրդ դրամով ավելի է 2022-ի առաջին եռամսյակի արդյունքից,
- ✓ ցանկի վերջին հարյուրյակում նշանակալի ավելացում են արձանագրել (նախորդ տարվա համեմատ՝ առնվազն 50%-ի չափով):,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը կազմել է 33 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ փոքր-ինչ բարձր է, սակայն միաժամանակ՝ ցածր է դիտարկվող ժամանակահատվածի մյուս տարիների համեմատությամբ,

- ✓ 2023թ. հունվար-մարտի արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործող 65 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2022-ի առաջին եռամսյակում այդպիսի հարկատուների թիվը 49 էր, 2020-ին՝ 47, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ:,
  - 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 144 է (2022-ին՝ 109),
  - խոշոր հարկատուների ցանկում ներառված տնտեսվարող սուբյեկտների մոտ ¼-ի պարագայում վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 100 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի ցանկում ներառվել էր 469 այդպիսի հարկատու, իսկ, օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ 585,
  - 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2023թ. հունվար-մարտ ամիսներին պետք էր վճարել ավելի քան 75 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ 2022-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 50 մլն դրամը, իսկ 2020-ին՝ 37 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը
  - 50 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը: Նախորդ տարիների համեմատությամբ այս ցուցանիշի մակարդակը էական փոփոխություններ չի արձանագրել,
  - եկամտային հարկի վճարման ծավալով աչքի ընկած սուբյեկտների թիվը ընթացիկ տարում զգալիորեն ավելացել է: Այսպես, հաշվետու եռամսյակում ՀՀ 160 հարկատու վճարել է 100 մլն դրամը գերազանցող եկամտային հարկ: Նախորդ տարի այդպիսիք 126-ն էին, 2020-ին՝ միայն 107-ը,
  - 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազում է գրանցվել, ինչը 2019-ից ի վեր համեմատաբար կայուն միտում է հանդիսանում: 2023թ. հունվար-մարտին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 26,2%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 29,4% էր,
  - 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության միայն 22,5%-ն են ուղղակի

հարկերը, ինչը զգալիորեն ցածր է նախորդ մի քանի տարիների մակարդակից

- 43 հակատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 30 էր, իսկ 2020-ին՝ 33,
- 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 209 ընկերություններ, 2022-ին հանրապետությունում գործել է 175 այդպիսի կազմակերպություն. 2020-ից հետո ցուցանիշի աճի տեմպի նշանակալի արագացում է նկատվում:

✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 1,9 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 1,5 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ մոտ 200 մլն դրամ (2022-ին՝ 227 մլն դրամ), եկամտային հարկը՝ 325 մլն դրամ (2022-ին՝ մոտ 280 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 980 մլն դրամ (2022-ին՝ 780 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 260 մլն դրամ (2022-ին՝ 165 մլն դրամ):

✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. առաջին եռամսյակի արդյունքներով վճարել է 80 մլն դրամի հարկ (2022-ին՝ 53 մլն դրամ), շահութահարկը՝ 3 մլն դրամ (2022-ին՝ 3,5 մլն դրամ), եկամտային հարկը՝ 15 մլն դրամ (2022-ին՝ 12 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 43 մլն դրամ (2022-ին՝ 28 մլն դրամ):

✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 78%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ նվազել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 79,2%, ինչը նկատելիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից

✓ Խոշոր հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում տեղ զբաղեցրած կազմակերպություններից միայն 10%-ի դեպքում է, որ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ առկա է վճարած հարկերի ծավալի նվազում: Այս ցուցանիշով զգալի է առաջին հերթին Զանգեզուրի ՊՄԿ-ի ցուցանիշի կրճատումը՝ շուրջ 20 մլրդ դրամով, ինչը գլխավորապես պայմանավորված է նախորդ տարվա ընթացքում հարկատուի կողմից պետության պահանջով՝ նախկինում թերակատարված հարկային պարտավորությունների վերահաշվարկով ու կատարմամբ: Նաև, որոշ դերակատարում է ունեցել նախորդ տարվա համեմատությամբ այս տարվա առաջին եռամսյակում պղնձի համաշխարհային շուկայում կոնյունկտուրայի որոշ վատթարացումը:

- ✓ Եվ 4 հարկատուի վճարած հարկերի նվազումը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 600-800 մլն դրամ, իսկ մյուսներինը գրեթե չի գերազանցել 300 մլն դրամի շեմը:
- ✓ Առաջին հարյուրյակի 11 հարկատուներ նախորդ տարվա ցանկում ներկայացված չեն եղել ընդհանրապես:
- ✓ Շուրջ 20 հարկատու նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալն ընդլայնել է ավելի քան 1 մլրդ դրամով: Աճի առաջատարներից կարելի է առանձնացնել հետևյալ ընկերություններին. «Փրիթի Ուէյ» (2022-ի համեմատ հարկային վճարումներն ավելացրել է 8,2 մլրդ դրամով), «Ակբա Բանկ» (ավելացումը՝ 5,4 մլրդ դրամ), «Մոբայլ Սենթր Արթ» (+4 մլրդ դրամ), «Գրանդ Տոբակո» (+3,8 մլրդ դրամ), «Սի Փի Էս Էներջի Գրուպ» (+3,1 մլրդ դրամ):